Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-1203-03.12.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 77-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է տասնմեկ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ հինգը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից չորսն ընտրվում են առաջին ատյանի դատարանի դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացումից (քաղաքացիական (որը ներառում է նաև սնանկության մասնագիտացումը), քրեական, վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացումներ) մեկ դատավոր, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին մասով.

«5.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն դատավորը, որն ունի դատավորի պաշտոնում առնվազն երեք տարվա

աշխատանքային փորձ, ինչպես նաև վերջին երկու տարվա ընթացքում չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության:».

3) 8-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Նախկին դատավորը չի կարող ընդգրկվել դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների ցուցակում, եթե նրա լիազորությունները առաջադրվելու պահին նախորդող հինգ տարվա ընթացքում դադարեցվել են կարգապահական խախտում թույլ տալու կամ նրա լիազորությունները դադարել են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվելու հիմքով: Ընդ որում, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը դատավոր չհանդիսացող անդամը պարտավոր է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իր պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու և տարեկան գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրեր, ինչպես նաև հանձնաժողովի անդամ ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը դատավոր չհանդիսացող անդամը չի կարող իրականացնել դատական ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին և 8.2.-ին մասերով.

«8.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը իր լիազորությունների իրականացման ողջ ընթացքում պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկելուց,

2) զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործով հանդես է գալիս որպես կողմ կամ կողմի օրինական ներկայացուցիչ,

3) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց:

8.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուին առաջադրելու դիմումին կից Դատական դեպարտամենտ է ներկայացվում նաև նրա բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը: Հարցաթերթիկը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Դատական դեպարտամենտի ղեկավարը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Դատական դեպարտամենտի ղեկավարը թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո այն տրամադրում է Ընդհանուր ժողովի անդամներին՝ Ընդհանուր ժողովի նիստից առնվազն երեք օր առաջ: Ընդհանուր ժողովի կողմից Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի ընտրությունից հետո եռօրյա ժամկետում Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի վերաբերյալ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը, նրա կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և նրա գրավոր համաձայնության դեպքում՝ նաև այդ առարկությունները:»:

5) 9-րդ մասում՝

ա. «Բարձրագույն դատական խորհրդի սահմանած պահանջները» բառերը փոխարինել «սույն հոդվածի 9.1-ին մասի պահանջներին» բառերով,

բ. 3-րդ նախադասության «պահանջները» բառը փոխարինել «պահանջներին բավարարելու վերաբերյալ փաստաթղթերի ցանկը, որն առնվազն ներառում է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց պետական գրանցման վկայականի, կանոնադրության, դիմելուն նախորդող հինգ տարիների ընթացքում

Պետական եկամուտների կոմիտե ներկայացված գործունեության տարեկան հաշվետվությունների և իր կանոնադրական նպատակների շրջանակներում գործունեություն ծավալելու վերաբերյալ փաստաթղթերի պատճենները ներկայացնելու պահանջ» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին մասով.

«9.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող են առաջադրել այն ոչ առևտրային կազմակերպությունները (բացառությամբ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպությունների), որոնք.

1) ստացել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում.

2) Դատական դեպարտամենտի կողմից Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների ընտրության մրցույթի հայտարարության հրապարակման օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում իրենց կանոնադրական նպատակներում որպես գործունեության ուղղություն ներառել են ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության կամ դատական իշխանության ոլորտները և այդ ոլորտներում իրականացրել են փաստացի գործունեություն:».

7) 10-րդ մասի «բաց» բառը փոխարինել «գաղտնի» բառով.

Հոդված 2. Օրենքի ողջ տեքստում «հասարակական կազմակերպություններ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ոչ առևտրային կազմակերպություններ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 3. Օրենքի 77.1-ին հոդվածի

1) 2-րդ մասում՝

ա.լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին կետով.

«3.1) Հանձնաժողովի անդամի կողմից վարքագծի կանոնները, ինչպես նաև Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի կողմից սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 8-րդ կամ 8.1.-ին մասերի պահանջները խախտելու դեպքում.».

բ. 4-րդ կետում «աշխատակարգով» բառը փոխարինել «գործունեության կարգով» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1.-ին մասով.

«2.1. Հանձնաժողովի անդամի, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի՝ որպես նախագահ իր լիազորություններն իրականացնելիս, լիազորությունների դադարման կամ դադարեցման հետ կապված ընթացակարգային հարաբերությունները կարգավորվում են Հանձնաժողովների գործունեության կարգերով:».

3) 5-րդ մասում՝

ա. «մեկամսյա» բառը փոխարինել «քառասունհինգօրյա» բառով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

« Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում ընտրություն կազմակերպելիս հաշվի են առնվում նաև 77-րդ հոդվածի 4-րդ և 5.1-ին մասով սահմանվող պահանջները:»:

Հոդված 4. Օրենքի 78-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ընթացիկ գործունեությունը» բառերից հետո լրացնել «՝հանձնաժողովի գործունեության կարգին համապատասխան: Հանձնաժողովի գործունեության կարգով կարող են սահմանվել հանձնաժողովի նիստերի անցկացման և հարցերի քննարկման առանձնահատկությունները» բառերը.

2) լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասերով.

«2.1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու կամ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդի դիմելու հարցը լուծելու համար Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի առնվազն յոթ անդամ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը համարվում է մերժված, իսկ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:

2.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ: Եթե Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշման մեջ, և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը:»:

Հոդված 5. Օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) ուժը կորցրած ճանաչել 3.1-ին կետը.

2) 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) չորրորդ հերթին՝ սույն օրենսգրքի 110.1-ին հոդվածով նախատեսված հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին՝ ըստ հատուկ կարգով որակավորման ստուգումը հանձնելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող անձին.

5) հինգերորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին, այդ թվում՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուներին և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին.».

3) 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 116-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում՝ «3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերում» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքում, ինչպես նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն, բացառությամբ՝

1) հղիության և ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու հետ կապված արձակուրդում գտնվելու պատճառներով հրաժարվելու դեպքի,

2) այն դեպքի, երբ ցուցակում առկա են Արդարադատության ակադեմիայի թափուր տեղին համապատասխան մասնագիտացման նույն տարվա շրջանավարտներ, որոնք ունեն իրենից նվազ հանրագումարային միավորներ: Սույն կետը չի տարածվում դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուի վրա:».

3) 6-րդ մասում «4-րդ կետով սահմանված դեպքում» բառերը փոխարինել «5-րդ կետով սահմանված դեպքում (բացառությամբ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուի)» բառերով:

Հոդված 7. Օրենքի 119-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «խորհրդակցական սենյակում՝» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Դատավորն իր դիմումով կարող է միջնորդել Բարձրագույն դատական խորհրդին՝ դիմումի քննարկումը անցկացնելու խորհրդակցական սենյակում: Դատավորի միջնորդությունը բավարարելու դեպքում քվեարկությունը անցկացվում է խորհրդակցական սենյակում:»:

Հոդված 8. Օրենքի 146-րդ հոդվածի 5-րդ մասի «չհարուցելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, որն ուղարկում է նաև վարույթ հարուցող մյուս մարմնին» բառերը:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները շարունակում են պաշտոնավարել և նրանց նկատմամբ կիրառելի են սույն օրենքով սահմանված պահանջները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի թափուր տեղերի դատավոր չհանդիսացող անդամներին:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելով իրենց գործունեությունը դադարեցնում են դատական ներկայացուցչություն իրականացնել Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում: Սույն մասով սահմանված պահանջը բավարարելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները հայտարարություն են ներկայացնում հանձնաժողովի նախագահին՝ իրենց գործունեությունը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելու մասին: Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների կողմից սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետում սույն մասով սահմանված հայտարարությունը հանձնաժողովի նախագահին չներկայացնելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի լիազորությունները սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրը դադարում են:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Ընդհանուր ժողովի հանձնաժողովների գործունեության կարգերը համապատասխանեցվում են սույն օրենքին և դրանով սահմանված հանձնաժողովների ընտրության նոր կարգավորումներին:

6. Սույն օրենքի 6-րդ հոդվածի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաստատված դատավորների թեկնածուների ցուցակներից առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնելու նկատմամբ:

Տեղեկանք փոփոխվող հոդվածների

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում
Կ-1203-03.12.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 77-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է տասնմեկ անդամից, որոնցից վեցը՝ դատավոր անդամներ, իսկ հինգը՝ դատավոր չհանդիսացող անդամներ: Դատավոր անդամներից չորսն ընտրվում են առաջին ատյանի դատարանի դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացումից (քաղաքացիական (որը ներառում է նաև սնանկության մասնագիտացումը), քրեական, վարչական և հակակոռուպցիոն մասնագիտացումներ) մեկ դատավոր, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5.1-ին մասով.

«5.1. ~~Առաջին ատյանի դատարաններից~~ ~~Է~~էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն դատավորը, որն ունի դատավորի պաշտոնում առնվազն երեք տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաև վերջին երկու տարվա ընթացքում չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության:».

3) 8-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Նախկին դատավորը չի կարող ընդգրկվել դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների ցուցակում, եթե նրա լիազորությունները առաջադրվելու պահին նախորդող հինգ տարվա ընթացքում դադարեցվել են կարգապահական խախտում թույլ տալու կամ նրա լիազորությունները դադարել են նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու կամ քրեական հետապնդումը ոչ արդարացնող հիմքով դադարեցվելու հիմքով: Ընդ որում, Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ–ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը դատավոր չհանդիսացող անդամը ~~չի կարող Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում եւ Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնել, ինչպես նաև իր գործունեության ընթացքում և դրանից հետո երկու տարվա ընթացքում պարտավոր է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի իրավիճակային հայտարարագիր~~ պարտավոր է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իր պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու և տարեկան գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրեր, ինչպես նաև հանձնաժողովի անդամ ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը դատավոր չհանդիսացող անդամը չի կարող իրականացնել դատական

ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8.1-ին և 8.2.-ին մասերով.

«8.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը իր լիազորությունների իրականացման ողջ ընթացքում պարտավոր է՝

1) զերծ մնալ դատական իշխանությունը վարկաբեկելուց,

2) զերծ մնալ որևէ դատարանում քննվող կամ ակնկալվող գործի վերաբերյալ հրապարակայնորեն կարծիք հայտնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործով հանդես է գալիս որպես կողմ կամ կողմի օրինական ներկայացուցիչ,

3) զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց~~, բացառությամբ օրենքով նախատեսված գիտական ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի~~:

8.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածուին առաջադրելու դիմումին կից Դատական դեպարտամենտ է ներկայացվում նաև նրա բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը: Հարցաթերթիկը ստանալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Դատական դեպարտամենտի ղեկավարը բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկը ներկայացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով: Դատական դեպարտամենտի ղեկավարը թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խորհրդատվական եզրակացությունն ստանալուց հետո այն տրամադրում է Ընդհանուր ժողովի անդամներին՝ Ընդհանուր ժողովի նիստից առնվազն երեք օր առաջ: Ընդհանուր ժողովի կողմից Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի ընտրությունից հետո եռօրյա ժամկետում Դատական իշխանության պաշտոնական

կայքում հրապարակվում է Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի վերաբերյալ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը, նրա կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և նրա գրավոր համաձայնության դեպքում՝ նաև այդ առարկությունները:»:

5) 9-րդ մասում՝

ա. «Բարձրագույն դատական խորհրդի սահմանած պահանջները» բառերը փոխարինել «սույն հոդվածի 9.1-ին մասի պահանջներին» բառերով,

բ. 3-րդ նախադասության «պահանջները» բառը փոխարինել «պահանջներին բավարարելու վերաբերյալ փաստաթղթերի ցանկը, որն առնվազն ներառում է ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց պետական գրանցման վկայականի, կանոնադրության, դիմելուն նախորդող հինգ տարիների ընթացքում Պետական եկամուտների կոմիտե ներկայացված գործունեության տարեկան հաշվետվությունների և իր կանոնադրական նպատակների շրջանակներում գործունեություն ծավալելու վերաբերյալ փաստաթղթերի պատճենները ներկայացնելու պահանջ» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին մասով.

«9.1. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի թեկնածու կարող են առաջադրել այն ոչ առևտրային կազմակերպությունները (բացառությամբ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, պետության կամ համայնքի կողմից հիմնադրված ոչ առևտրային կազմակերպությունների), որոնք.

1) ստացել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի գործակալության կողմից պետական գրանցում.

2) Դատական դեպարտամենտի կողմից Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների ընտրության մրցույթի

հայտարարության հրապարակման օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում իրենց կանոնադրական նպատակներում որպես գործունեության ուղղություն ներառել են ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության կամ դատական իշխանության ոլորտները և այդ ոլորտներում իրականացրել են փաստացի գործունեություն:».

7) 10-րդ մասի «բաց» բառը փոխարինել «գաղտնի» բառով.

Հոդված 2. Օրենքի ողջ տեքստում «հասարակական կազմակերպություններ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «ոչ առևտրային կազմակերպություններ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 3. Օրենքի 77.1-ին հոդվածի

1) 2-րդ մասում՝

ա.լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին կետով.

«3.1) Հանձնաժողովի անդամի կողմից վարքագծի կանոնները, ինչպես նաև Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի կողմից սույն օրենսգրքի 77-րդ հոդվածի 8-րդ կամ 8.1.-ին մասերի պահանջները խախտելու դեպքում.».

բ. 4-րդ կետում «աշխատակարգով» բառը փոխարինել «գործունեության կարգով» բառերով:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2.1.-ին մասով.

«2.1. Հանձնաժողովի անդամի, ինչպես նաև Հանձնաժողովի նախագահի՝ որպես նախագահ իր լիազորություններն իրականացնելիս, լիազորությունների դադարման կամ դադարեցման հետ կապված ընթացակարգային հարաբերությունները կարգավորվում են Հանձնաժողովների գործունեության կարգերով:».

3) 5-րդ մասում՝

ա. «մեկամսյա» բառը փոխարինել «քառասունհինգօրյա» բառով.

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

« Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում ընտրություն կազմակերպելիս հաշվի են առնվում նաև 77-րդ հոդվածի 4-րդ և 5.1-ին մասով սահմանվող պահանջները:»:

Հոդված 4. Օրենքի 78-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «ընթացիկ գործունեությունը» բառերից հետո լրացնել «՝հանձնաժողովի գործունեության կարգին համապատասխան: Հանձնաժողովի գործունեության կարգով կարող են սահմանվել հանձնաժողովի նիստերի անցկացման և հարցերի քննարկման առանձնահատկությունները» բառերը.

2) լրացնել հետևյալ նոր բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասերով.

«2.1. Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու կամ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդի դիմելու հարցը լուծելու համար Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի առնվազն յոթ անդամ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ միջնորդությունը համարվում է մերժված, իսկ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի

վերաբերյալ որոշումը չընդունվելու դեպքում հարուցված կարգապահական վարույթը կարճվում է:

2.2. Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել հատուկ կարծիք Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի ընդունած որոշման վերաբերյալ: Եթե Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի որոշման մեջ, և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը:»:

Հոդված 5. Օրենքի 115-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) ուժը կորցրած ճանաչել 3.1-ին կետը.

2) 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) չորրորդ հերթին՝ սույն օրենսգրքի 110.1-ին հոդվածով նախատեսված հատուկ կարգով որակավորման ստուգում անցած անձին՝ ըստ հատուկ կարգով որակավորման ստուգումը հանձնելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող անձին.

5) հինգերորդ հերթին՝ թեկնածուների ցուցակի համապատասխան մասնագիտացման բաժնի՝ Արդարադատության ակադեմիան ավելի վաղ ավարտած թեկնածուներին, այդ թվում՝ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուներին և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուներին՝ ըստ Արդարադատության ակադեմիան ավարտելու հանրագումարային միավորների նվազման կարգի: Հավասար հանրագումարային միավորների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին.».

3) 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի 116-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում՝ «3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված դեպքերում» բառերը փոխարինել «3-րդ և 4-րդ կետերով սահմանված դեպքում, ինչպես նաև դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դեպքում թեկնածուի անհամաձայնությունը հանգեցնում է նրան դատավորների թեկնածուների ցուցակից հանելուն, բացառությամբ՝

1) հղիության և ծննդաբերության, նորածնի որդեգրման կամ նորածնի խնամակալ նշանակվելու հետ կապված արձակուրդում գտնվելու պատճառներով հրաժարվելու դեպքի,

2) այն դեպքի, երբ ցուցակում առկա են Արդարադատության ակադեմիայի թափուր տեղին համապատասխան մասնագիտացման նույն տարվա շրջանավարտներ, որոնք ունեն իրենից նվազ հանրագումարային միավորներ: Սույն կետը չի տարածվում դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուի վրա:».

3) 6-րդ մասում «4-րդ կետով սահմանված դեպքում» բառերը փոխարինել «5-րդ կետով սահմանված դեպքում (բացառությամբ դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված գիտական աստիճան ունեցող թեկնածուի և վերջին 10 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն ունեցող թեկնածուի)» բառերով:

Հոդված 7. Օրենքի 119-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասից հանել «խորհրդակցական սենյակում՝» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1. Դատավորն իր դիմումով կարող է միջնորդել Բարձրագույն դատական խորհրդին՝ դիմումի քննարկումը անցկացնելու խորհրդակցական սենյակում: Դատավորի միջնորդությունը բավարարելու դեպքում քվեարկությունը անցկացվում է խորհրդակցական սենյակում:»:

Հոդված 8. Օրենքի 146-րդ հոդվածի 5-րդ մասի «չհարուցելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, որն ուղարկում է նաև վարույթ հարուցող մյուս մարմնին» -բառերը:

Հոդված 9. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները շարունակում են պաշտոնավարել և նրանց նկատմամբ կիրառելի են սույն օրենքով սահմանված պահանջները:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի թափուր տեղերի դատավոր չհանդիսացող անդամներին:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելով իրենց գործունեությունը դադարեցնում են դատական ներկայացուցչություն իրականացնել Հայաստանի Հանրապետության

ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում: Սույն մասով սահմանված պահանջը բավարարելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները հայտարարություն են ներկայացնում հանձնաժողովի նախագահին՝ իրենց գործունեությունը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելու մասին: Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների կողմից սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետում սույն մասով սահմանված հայտարարությունը հանձնաժողովի նախագահին չներկայացնելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի լիազորությունները սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրը դադարում են:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Ընդհանուր ժողովի հանձնաժողովների գործունեության կարգերը համապատասխանեցվում են սույն օրենքին և դրանով սահմանված հանձնաժողովների ընտրության նոր կարգավորումներին:

6. Սույն օրենքի 6-րդ հոդվածի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաստատված դատավորների թեկնածուների ցուցակներից առաջին ատյանի դատարանի դատավորի պաշտոնի թափուր տեղ առաջանալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից Հանրապետության նախագահի նշանակմանն առաջարկելու նպատակով թեկնածու ընտրելիս առաջարկություն ներկայացնելու նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1203-03.12.2025-ՊԻ-011/1, Կ-1203[1]-03.12.2025-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի					
1.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետ**	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է 2018 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 77-րդ հոդվածում լրացնել նոր 5.1-ին մաս, ըստ որի՝ «Առաջին ատյանի դատարաններից էթիկայի եւ կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել այն դատավորը, որն ունի դատավորի պաշտոնում առնվազն	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			երեք տարվա աշխատանքային փորձ, ինչպես նաեւ վերջին երկու տարվա ընթացքում չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության»: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ներգրավվում են նաև Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանի դատավորներ, առաջարկում ենք սույն կարգավորումից հանել «Առաջին ատյանի դատարաններից» բառերը, որպեսզի կարգավորումը վերաբերելի լինի բոլոր ատյանների դատարանների դատավորներին:		
2.	***ՀՀ կառավարություն***	**նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետ**	Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Դատավորների ընդհանուր ժողովում դատավոր չհանդիսացող անդամների թիվը Նախագծով ներկայացվող առաջարկների հիման վրա ավելանալու է, ավելին փոփոխվելու է նաև Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելու ձայների հարաբերակցությունը՝ նախատեսելով որ այս որոշումները	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			կարող են ընդունվել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կողմ քվեարկությամբ, առաջանում է անհրաժեշտություն բարձրացնել նաև հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված առաջարկվում է սահմանել, որ հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները նույնպես պարտավոր լինեն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու և տարեկան գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրեր: Ողջ վերոգրյալի հիման վրա առաջարկվում է քննարկվող կարգավորման «չի կարող Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում եւ Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնել, ինչպես նաեւ իր գործունեության ընթացքում եւ		

			դրանից հետո երկու տարվա ընթացքում պարտավոր է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված դեպքում ներկայացնել գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի իրավիճակային հայտարարագիր» բառերը փոխարինել «պարտավոր է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իր պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու և տարեկան գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրեր, ինչպես նաև հանձնաժողովի անդամ ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը դատավոր չհանդիսացող անդամը չի կարող իրականացնել դատական ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում»:		

3.	***ՀՀ կառավարություն***	**Նախագիծը լրացնել նոր հոդվածով և համապատասխանաբար փոխել հոդվածների հաջորդականությունը**	Ներկայումս ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կարգապահական վարույթ հարուցող մարմինը (այսուհետ՝ վարույթ հարուցող մարմին) վարույթ հարուցելու, այն կասեցնելու, վերսկսելու և կարճելու որոշումները կայացնելու պահից եռօրյա ժամկետում սույն օրենսգրքի 147-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով ուղարկում է վարույթ հարուցող մյուս մարմնին, ինչպես նաև հաղորդում ներկայացրած անձին և համապատասխան դատավորին:»: Սակայն, նշված շարքից դուրս են մնում կարգապահական վարույթ չհարուցելու վերաբերյալ ներկայացված պատասխանները: Արդյունքում կարգապահական վարույթ հարուցող մարմինները այս մասով տեղեկացված չլինելով միմյանց գործունեությունից, ձևավորում են տարբերակված պրակտիկա: Ուստի բարձրացված խնդիրը կարգավորելու նպատակով առաջարկվում է Նախագիծը	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. Օրենքի 146-րդ հոդվածի 5-րդ մասի «չհարուցելու հիմքերը» բառերից հետո լրացնել «, որն ուղարկում է նաև վարույթ հարուցող մյուս մարմնին» բառերը:		
4.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի բխող կարգավորումների կիրառությունը հստակեցնելու նպատակով առաջարկվում է նախագծի եզրափակիչ և անցումային դրույթներում նախատեսել փոփոխություններ: Մասնավորապես, առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները շարունակում են պաշտոնավարել և նրանց նկատմամբ կիրառելի են սույն օրենքով սահմանված պահանջները:»: Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասերով և համապատասխանաբար փոխել հաջորդող մասերի համարակալումը.	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			«3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի թափուր տեղերի դատավոր չհանդիսացող անդամներին: 4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելով իրենց գործունեությունը դադարեցնում են դատական ներկայացուցչություն իրականացնել Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում: Սույն մասով սահմանված պահանջը բավարարելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները հայտարարություն են ներկայացնում հանձնաժողովի		

			նախագահին՝ իրենց գործունեությունը սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխանեցնելու մասին: Ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների կողմից սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետում սույն մասով սահմանված հայտարարությունը հանձնաժողովի նախագահին չներկայացնելու դեպքում հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի լիազորությունները սույն մասով սահմանված մեկամսյա ժամկետը լրանալու հաջորդ օրը դադարում են:»:		
5.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 1-ին հոդված**	20.01.26թ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին	**Չի ընդունվել** Նշված առաջարկը չի կարող ընդունվել այն հիմնավորմամբ, որ Դատավորների ընդհանուր ժողովը՝ իր հանձնաժողովներով հանդերձ, դատավորների ինքնակառավարման մարմին է, որի	

			հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությունից հանել , «ընտրվելու օրվանից հետո մինչև իր լիազորությունների ժամկետի ավարտը» և «չի կարող Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության, մասնագիտացված, վերաքննիչ դատարաններում և Վճռաբեկ դատարանում դատական ներկայացուցչություն իրականացնել, ինչպես նաև» բառերը:	գործողությունները իրավական, այդ թվում՝ բացասական հետևանքներ են ունենում դատավորների համար: Այս առումով, գործող փաստաբանների կամ դատարաններում այլ կերպ ներկայացուցչություն իրականացնողների ընդգրկումը Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում օբյեկտիվորեն կարող է ենթադրել շահերի բախման և սուբյեկտիվիզմի դրսևորման այլ հնարավոր ռիսկեր, քանի որ վերջիններիս գործունեությունն անմիջականորեն կապված է դատարանների հետ: Այսպես, գործնականում հաճախ են լինելու իրավիճակներ, երբ դատարանի կայացրած դատական ակտը «չի բավարարելու» որևէ	

				կողմի (ներկայացուցչի) ակնկալիքները, ինչով պայմանավորված վերջինս սուբյեկտիվ տրամադրվածություն է ունենալու դատավորի նկատմամբ: Ըստ այդմ, օրինակ՝ Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը, որը զուգահեռ իրականացնում է նաև փաստաբանական գործունեություն կամ այլ կերպ ներկայացուցչություն է իրականացնում դատարաններում, կարող է շահագրգռվածություն ունենալ կոնկրետ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցում: Վերոգրյալի համատեքստում նման իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է	

				սահմանափակել անձի՝ Դատավորների ընդհանուր ժողովի հանձնաժողովների կազմում որպես անդամ ընդգրկվելու դեպքում լիազորությունների ժամկետով դատարաններում ներկայացուցչություն իրականացնելու իրավունքը:	
6.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 8.1 մասի 2-րդ կետից հանել «օրինական» բառը:	**Չի ընդունվել** Տե՛ս սույն ամփոփաթերթի 5-րդ կետում ներկայացված առաջարկների առարկությունը:	
7.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասի 8.1 մասում ավելացնել 4-րդ կետ հետևյալ բովանդակությամբ .«նախապես տեղեկացնել և չմասնակցել այն դատավորի վերաբերյալ կարգապահական հարցերի քննարկմանը, որի կողմից քննված (քննվող) գործերի ընթացքում ինքը հանդիսացել է կողմ կամ կողմի ներկայացուցիչ:	**Չի ընդունվել** Տե՛ս սույն ամփոփաթերթի 5-րդ կետում ներկայացված առաջարկների առարկությունը:	

8.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ նախադասության «մեկ երրորդ» բառերը փոխարինել «կեսը» բառով:	**Չի ընդունվել** Մինչ ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի մշակումը, նախագծի հիմնական կարգավորումների վերաբերյալ հայեցակարգային առաջարկները ներկայացվել են Վենետիկի հանձնաժողովի կարծիքին: Ի պատասխան նշված հայեցակարգային առաջարկների, Վենետիկի հանձնաժողովը ողջունել է Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխությունները՝ նշելով, որ հայեցակարգով	

				ներկայացված փոփոխությունները համահունչ են Վենետիկի հանձնաժողովի և ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության կողմից նախկինում տրված առաջարկությանը՝ բարձրացնելու նշված հանձնաժողովի արդյունավետությունը, դրանով իսկ հնարավոր դարձնելով արդարադատության նախարարին հեռացնել դատավորների նկատմամբ կարգապահական գործեր հարուցելու իրավասու սուբյեկտների շարքից: Նույն կարծիքում Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովում արտաքին մասնակցության ընդլայնումը դրական	

				փոփոխություն է, քանի որ այն ուղղված է «կորպորատիվիզմի» ռիսկի նվազեցմանը: Ավելին, Վենետիկի հանձնաժողովը կարևորել է նաև հանձնաժողովի քվորումի և որոշումների ընդունման հարցերը՝ արձանագրելով, որ թե դատավոր անդամների, թե ոչ դատավոր անդամների արդյունավետ մասնակցության համար, կարող է տեղին լինել ապահովել, որ հանձնաժողովում որոշումները չընդունվեն բացառապես այդ խմբերից մեկի քվեարկությամբ: Այսինքն՝ Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում նույնպես կարևորել է քվորումի և որոշումների կայացման այնպիսի ընթացակարգի սահմանումը, որը հնարավորություն կտա և դատավոր անդամներին և դատավոր չհանդիսացող	

				անդամներին ներգրավված լինել և իրենց քվեով իրենց դիրքորոշումը հայտնել կարգապահական վարույթ հարուցելու ընթացակարգում: Ըստ այդմ, նախագծով ամրագրվել է, որ Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը:	
9.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետի 3-րդ նախադասության «հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ», բառերը փոխարինել «եթե դրան կողմ է քվեարկել հանձնաժողովի անդամների առնվազն 7 անդամ» բառերով:	**Չի ընդունվել** Հիմք ընդունելով սույն ամփոփաթերթի 8-րդ կետով ներկայացված առարկությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ ի տարբերություն կարգապահական վարույթ հարուցելու մասին	

				որոշումների ընդունման ձայների հարաբերակցության, սահմանվել է, որ հարուցված կարգապահական վարույթի արդյունքում միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու հարցի վերաբերյալ որոշումն ընդունվում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որը իրենից ենթադրում է հանձնաժողովի 11 անդամներից առնվազն 6 անդամների կողմից քվեարկություն: Միաժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս էլ որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ և արտահայտում են հանձնաժողովի մեծամասնության դիրքորոշումը:	

10.	***«Հայաստան» խմբակցություն***	**Նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում «ընտրում է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամներին» բառերը փոխարինել «ընտրությամբ լրացնում է թափուր տեղերը» բառերով:	**Ընդունվել է** Նախագծի անցումային դրույթները լրամշակվել են և սահմանվել է, որ «Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Ընդհանուր ժողովն ընտրում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի թափուր տեղերի դատավոր չհանդիսացող անդամներին:»:	
11.	***Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան***	**Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետ**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 77-րդ հոդվածում լրացվող 8.1.-ին մասի 3-րդ կետով նախատեսվում է, որ «Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամը իր լիազորությունների իրականացման ողջ ընթացքում պարտավոր է՝ զերծ մնալ դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, *բացառությամբ օրենքով նախատեսված գիտական*	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի:»: Պայմանավորված այն հանգամանքով, որ հանձնաժողովի անդամը ցանկացած դեպքում պետք է դրսևորի զսպվածություն և դատավորի մասնագիտական կամ անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց ձեռնպահ մնա, առաջարկվում է նշված կարգավորումից հանել «*բացառությամբ օրենքով նախատեսված գիտական ազատության շրջանակում իրականացվող մասնագիտական գործունեության դեպքերի» բառերը:*		
12.	***Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան***	**Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ կետ**	Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 77-րդ հոդվածում լրացվող 8.2.-րդ մասը առաջարկվում է լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Ընդհանուր ժողովի կողմից Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի ընտրությունից հետո եռօրյա	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

			ժամկետում Դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվում է Ընդհանուր ժողովի կողմից ընտրված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամի վերաբերյալ բարեվարքության եզրակացության եզրափակիչ մասը, նրա կողմից եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացված լինելու և նրա գրավոր համաձայնության դեպքում՝ նաև այդ առարկությունները:»: Նշված առաջարկի հիմքում ընկած է այն, որ Ազգային ժողովի կողմից 20.01.2026թ.-ին առաջին ընթերցմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերը (Կ-1202-02.12.2025-ՊԻ-011/1), որոնցով նախատեսվում է սահմանել, որ օրենքով		

			նախատեսված դեպքերում հրապարակման ենթակա պետք է լինեն նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական բնույթի եզրակացությունների եզրափակիչ մասերը: Քանի որ նախագծերի փաթեթով նման անհրաժեշտություն է նախատեսվել բոլոր ատյանների դատավորների և նրանց թեկնածուների համար, առաջարկվում է համանման կարգավորում նախատեսել նաև հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների համար՝ որպես նրանց գործունեության և ընտրության թափանցիկության ապահովման մեխանիզմ:		
«««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
11.	***Կառավարություն***	**Նախագծի 1-ին հոդված**	Հիմք ընդունելով սույն ամփոփաթերթի 2-րդ կետում ներկայացված հիմնավորումները, և այն որ քննարկվող փոփոխությունները բխում են սույն ամփոփաթերթի 2-րդ կետով առաջարկվող փոփոխություններից՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն	

			հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի 34-րդ հոդվածում՝ 1) 1-ին մասը «պետական պաշտոն զբաղեցնող անձինք,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները,» բառերով: 2) 2-րդ մասը «Պետական պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց)» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները» բառերով:»:		

12.	***Կառավարություն***	**Նախագծի 2 հոդված**	Հիմք ընդունելով սույն ամփոփաթերթի 11-րդ կետով կատարված փոփոխությունները և դրանց կիրառման առանձնահատկությունները սահմանելու անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը լրացնել «Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ» վերնագրով և հետևյալ բովանդակությամբ 2-3-րդ մասերով. «2.«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող դատավոր չհանդիսացող անդամները և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրանց ընտանիքի անդամները Կոռուպցիայի	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն	

			կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում միայն պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու և տարեկան հայտարարագրեր: 3.«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին գործող դատավոր չհանդիսացող անդամները և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրանց ընտանիքի անդամները առաջին տարեկան հայտարարագիրը ներկայացնում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու տարվա համար՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:»:		